Հաշտարարության դերը մտավոր սեփականության ոլորտում

Գիտելիքահենք տնտեսության համատեքստում մտավոր սեփականությունը (ՄՍ) առանցքային դեր է խաղում նորարարությունը և տնտեսական աճը խթանելու գործում: Այնուամենայնիվ, ՄՍ իրավունքների շուրջ վեճերն անխուսափելի իրականություն են այս մրցակցային դաշտում: Վեճերը հաճախ հանգեցնում են ծախսատար և երկարատև իրավական գործընթացների: Նման դեպքերում հաշտարարությունը հանդես է գալիս որպես վեճերի լուծման այլընտրանքային արդյունավետ միջոց: Հաշտարարությունն առաջարկում է հակամարտությունների լուծման համագործակցային և արդյունավետ ուղի, որը հնարավորություն է տալիս պահպանել գործնական հարաբերությունները և խթանել նորարարությունը:

Մտավոր սեփականության հետ կապված վեճերը կարող են խաթարել բիզնես գործունեությունը և վտանգել գործարարական ակտիվների արժեքը: Ավելին, քանի որ ձեռնարկությունները գնալով ակտիվանում են միջազգային հարթակում՝ համագործակցելով օտարերկրա գործընկերների հետ, ՄՍ վեճերը հաճախ ընդգրկում են մի քանի երկրների իրավական կարգավորումներ, անդրազգային պայմանագրեր, բազմաթիվ իրավասություններ և ներառում են տարբեր կողմերի: Այս հոդվածում AMCA-ն բացահայտում է հաշտարարության դերը ՄՍ վեճերի լուծման գործում՝ կենտրոնանալով դրա առավելությունների, գործընթացի և արդյունավետության վրա:

Ի՞նչ է ՄՍ հաշտարարությունը

ՄՍ հաշտարարությունը կամավոր և գաղտնի գործընթաց է, որտեղ չեզոք միջնորդը նպաստում է վիճող կողմերի միջև քննարկումներին: Ի տարբերություն դատավարության մրցակցային բնույթի՝ հաշտարարությունը համագործակցային հարթակ է, ինչը թույլ է տալիս վիճող կողմերին պարզաբանել թյուրիմացությունները և գտնել փոխադարձ ընդունելի լուծումներ: Հաշտարարի օգնությամբ կողմերը կարող են լուծել տարբեր ՄՍ վեճեր՝ ներառյալ հեղինակային իրավունքներին, արտոնագրերին, ապրանքային նշաններին, ինչպես նաև առևտրային գաղտնիքին առնչվող վեճեր:

ՄՍ վեճերը հաճախ պահանջում են նեղ մասնագիտացում ունեցող մասնագետների, ովքեր կարող են արդյունավետ կերպով հարթել հակասությունները: Ի տարբերություն դատական համակարգի՝ հաշտարարությունն առաջարկում է այդպիսի մասնագետների ծառայություններ: Օրինակ՝ դիզայներական ընկերությունը, որը ձեռք է բերել դիզայների աշխատանքները վաճառելու բացառիկ իրավունքները, առանց հեղինակի թույլտվության փոխում է դիզայնը՝ վաճառքի ծավալները մեծացնելու նպատակով: Հաշտարարությունը հնարավորություն է տալիս ոլորտի նեղ մասնագետի միջամտությամբ արագ և արդյունավետ կերպով լուծել նմանօրինակ վեճերը:

ՄՍ վեճերում հաշտարարության առավելությունները

Քանի որ ՄՍ վեճերի բարդության ու շրջանակի շարունակական աճին զուգահեռ հաշտարարության առավելություններն էլ ավելի գրավիչ են դառնում: Ստորև ներկայացված են ՄՍ վեճերը հաշտարարությանը միջոցով լուծելու մի շարք հիմնական առավելություններ՝

- **Պարզեցված ընթացակարգ:** Ավանդական դատավարության դեպքում վեճը կարող է ընդգրկել տարբեր երկրներում ընթացող դատական վարույթներ: Արդյունքում, տարբեր երկրների դատարաններ կարող են իրարամերժ վճիռներ կայացնել՝ դժվարացնելով դրանց կատարումը և վեճի վերջնական լուծումը: Հաշտարարությունն առաջարկում է վեճերի լուծման միասնական, արագացված ընթացակարգ: Ընտրելով հաշտարարությունը՝ կողմերը կարող են միավորել բազաթի զուգահեռ վեճեր՝ խուսափելով բազմակողմ դատական վարույթների հետ կապված բարդությունից և ծախսերից:

- **Գաղտնիություն:** Գաղտնիությունը հաշտարարության անկյունաքարային առանձնահատկություններից է: Վեճի և դրա հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը երաշխավորված է հաշտարարության պարագայում: Գաղտնիությունը հատկապես կարևոր է ՄՍ վեճերում, որոնք կարող են վերաբերել առևտրային, նորարական և տեխնոլոգիական գաղտնիքների:

- **Ինքնավարություն:** Հաշտարարության հիմնարար սկզբունքներից մեկը կողմերի ինքնավարությունն է: Հաշտարարության կողմերը զգալի ճկունություն ունեն ընթացակարգի կանոնների, անցկացման վայրի և լեզվի ընտրության հարցում:

- **Հարաբերությունների պահպանում:** ՄՍ վեճերը հաճախ առաջանում են շարունակական գործարար կամ մասնագիտական հարաբերություններ ունեցող կողմերի միջև: Հաշտարարությունը կողմերի համար կառուցողական հարթակ է ապահովում, որտեղ նրանք կարող են հայտնել իրենց մտահոգությունները և վեճի լուծման ուղղությամբ համատեղ աշխատել: Սա թույլ է տալիս նրանց պահպանել հարաբերությունները և նվազագույնի հասցնել հետագա կոնֆլիկտի վտանգը:

- **Փորձագիտություն:** Հաշտարարության դեպքում կողմերը կարող են ընտրել համապատասխան իրավական, տեխնիկական կամ բիզնես ոլորտներում մասնագիտացված փորձով հաշտարարներ: Սա երաշխավորում է, որ գործընթացն իրականացվի վեճն արդյունավետ կերպով կարգավորելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետների կողմից:

- **Ծախսարդյունավետություն:** Հաշտարարությունը ավելի ծախսարդյունավետ է, քանի որ այն սովորաբար պահանջում է ավելի քիչ ռեսուրսներ և ժամանակ վեճը լուծելու համար՝ միաժամանակ կողմերին հնարավորություն ընձեռելով հասնել վեճի համապարփակ լուծման:

Միջազգային փորձ

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության արբիտրաժի և հաշտարարության կենտրոնը (Arbitration and Mediation Center of the World Intellectual Property Organization Arbitration and Mediation Center), որը ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունն է, առաջնային դիրք է զբաղեցնում ՄՍ վեճերի լուծման ոլորտում: Մինչ

օրս Կենտրոնը ներգրավված է եղել ավելի քան 2800 IP-ի, նորարարության և տեխնոլոգիական վեճերի լուծման գործընթացում: Հատկանշական է, որ Կենտրոնի հաշտարարության գործերի 70%-ը ավարտվել է կողմերի միջև հաշտության համաձայնությամբ:

Մեկ այլ ուշագրավ օրինակ է Եվրոպական Միության Մտավոր սեփականության գրասենյակը (European Union Intellectual Property Office - EUIPO), որը վերահսկում է ԵՄ ապրանքային նշանների և դիզայնի իրավունքների կառավարումը: Այս իրավունքները լրացնում են ներպետական ՄՍ իրավունքները և փոխկապակցված են ՄՍ միջազգային համակարգերի հետ:

EUIPO-ն ավանդական հաշտարարությունից բացի, առաջարկում է նաև առցանց հաշտարարություն: Թեև EUIPO հաշտարարությունը հիմնականում կենտրոնանում է ՄՍ իրավունքների վրա (օրինակ՝ ապրանքային նշանները և արդյունաբերական դիզայնները) , այն կարող է տարածվել նաև այլ իրավունքների վրա՝ ներառյալ հեղինակային իրավունքին, տիրույթի անուններին և արտոնագրերին վերաբերող վեճերը:

Հաշվի առնելով, որ վեճերը հաճախ ընդգրկում են բազմաթիվ իրավասություններ և երկրներ, հաշտարարությունը տրամադրում է պարզեցված մոտեցում այս վեճերը լուծելու համար՝ ելնելով ներգրավված կողմերի լավագույն առևտրային և բիզնես շահերից:

Գործի ուսումնասիրություն

ՄՍ հաշտարարության և դրա գործնական հետևանքների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար առաջարկում ենք ուսումնասիրել հետևյալ գործը, որը վառ կերպով ցույց է տալիս ՄՍ վեճերը լուծելու հաշտարարության ներուժը:

Վեճը ծագել էր եվրոպական հեռահաղորդակցական ընկերություններից մեկի և ԱՄՆ-ում գրանցված ընկերության միջև՝ արտոնագրային համաձայնագրի շրջանակի շուրջ: Պայմանագրով ամերիկյան ընկերությունը ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ասիական երկրների տարածքում անլար հեռահաղորդակցության տեխնալոգիաների զարգացման համար պատենտային իրավունքներ էր շնորհում: Սակայն, պայմանագրի կնքումից չորս տարի անց տարաձայնություններ ծագեցին պատենտավորված տեխնալոգիաների արտոնագրված կիրառության վերաբերյալ:

Ըստ առաջ քաշված ենթադրությունների՝ ամերիկյան ընկերությունը սահմանազանցել էր արտոնագրի կիրառության շրջանակը: Քանի, որ կողմերի միջև առկա էր նախնական հաշտարարության համաձայնություն, եվրոպական ընկերությունը հաշտարարություն նախաձեռնեց Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության արբիտրաժի և հաշտարարության կենտրոնում:

Հաշվի առնելով վեճի մասնագիտացված բնույթը՝ կենտրոն կողմերին առաջարկել էր հաշտարարների ցանկ, ովքեր ունեն փորձառություն ինչպես արտոնագրերի, այնպես էլ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում: Հաստատված հաշտարարի օգնությամբ կողմերը արդյունավետ քննարկումներ են ծավալել՝ ուղղված իրենց

տարաձայնությունների լուծմանը: Հատկանշական է, որ հաշտարարության գործընթացի մեկնարկից հինգ ամսվա ընթացքում ձեռք է բերվել համաձայնության որոշում:

Հաշտարարության իրականացումը

ՄՄ հաշտարարության արդյունավետ իրականացումը պահանջում է մանրակրկիտ պլանավորում և իրականացում: Ստորև ներկայացնում ենք ՄՄ հաշտարարության իրականացման հիմնական փուլերը AMCA-ում.

Նախաձեռնում: AMCA-ում ՄՄ հաշտարարության գործընթացը կարող է նախաձեռնվել կողմերի միջև վեճը հաշտարարության միջոցով լուծելու նախնական պայմանավորվածության առկայության դեպքում, կա՛մ երբ կողմերից առնվազն մեկը վեճը ներկայացնում է Կենտրոն՝ ուղարկելով գրավոր հարցում:

Մեկնարկ: Նախնական համաձայնության առկայության պարագայում, AMCA-ում հաշտարարության սկիզբ է համարվում կողմերից առնվազն մեկի կողմից Կենտրոնին՝ հաշտարարություն իրականացնելու գրավոր դիմում ներկայացնելու օրը: Նման համաձայնության բացակայության դեպքում հաշտարարության մեկնարկի ամսաթիվ է համարվում այն օրը, երբ Քարտուղարությունը գրավոր հաստատում է ուղարկում կողմերին, որ այդպիսի համաձայնություն է ձեռք բերվել՝ միաժամանակ տրամադրելով նաև հաշտարարության նախահաշիվը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Հանդիպման ձևաչափ: Հաշտարարության առաջին հանդիպումը կազմակերպվում է AMCA-ի կողմից հաշտարարի հաստատումից կամ նշանակումից հետո ոչ ուշ քան տասը օրվա ընթացքում: Հաշտարարը, խորհրդակցելով ներգրավված կողմերի հետ, որոշում է այս նիստի օրը, ժամը, վայրը, օրակարգը և այլ առնչվող մանրամասներ:

Ներկայացուցչություն: Կողմերը կարող են մասնակցել ինչպես անհատապես, այնպես էլ իրենց ներկայացուցիչների հետ: Ակնկալվում է, որ գործընթացի ողջ ընթացքում բոլոր կողմերը կներգրավվեն բարեխղճորեն՝ համագործակցելով ինչպես հաշտարարի, այնպես էլ միմյանց հետ:

Հանդիպումների ձևաչափը: Հաշտարարությունը կարող է իրականացվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին հանդիպումների կամ երկուսի համակցման միջոցով: Հաշտարարը կողմերի համաձայնությամբ կարող է դիմել և ստանալ փորձագիտական կարծիք կամ խորհրդատվություն հաշտարարության գործընթացին առնչվող հարցերի վերաբերյալ:

Լուծումների ձևակերպում: Հաշտարարն աջակցում է կողմերին հնարավոր լուծումներ մշակելու հարցում: Ակտիվ ներգրավվածության և խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցումների միջոցով հաշտարարն ուղղորդում է կողմերին դեպի փոխշահավետ արդյունքներ, որոնք կբավարարեն նրանց հիմնարար շահերն ու մտահոգությունները:

Հաշտության համաձայնության մշակում: Եթե հաշտարարությունն ավարտվում է հաշտությամբ, կողմերը, ստորագրում են վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնություն: Կողմերի խնդրանքով AMCA-ն կարող է կարծիք հայտնել հաշտության համաձայնության վերաբերյալ: Բացի կողմերից այս համաձայնությունը ստորագրում է նաև հաշտարարը: Այս քայլերին հետևելը կողմերին հնարավորություն է տալիս հաշտարարությանը միջոցով արդյունավետ կերպով լուծել իրենց ՄՄ վեճերը:

Եզրակացություն

ՄՍ հաշտարարությունը վեճերը լուծելու արդյունավետ միջոց է, որ միտված է գործարար և աշխատանքային հարաբերությունները պահպանելուն, ինչպես նաև տեխնոլոգիաների և ստեղծարար աշխատանքի շարունակական առաջընթացը խթանելուն: Հաշտարարությունը, որպես արդյունք, խթան է հանդիսանում նաև նորարարության և համագործակցության մշակույթի ձևավորման հարցում: Քանի որ մտավոր սեփականության վեճերի բնույթն ավելի ու ավելի է բարդանում, հաշտարարության դերն ապագայում ավելի կարևոր կդառնա:

AMCA-ն՝ միջազգային լավագույն փորձի վրա հիմնված, մանրակրկտորեն մշակված կանոնների և հաշտարարության ոլորտում ունեցած իր փորձառության հիման վրա, ՄՍ վեճերի համար առաջարկում է բարձրորակ հաշտարարական ծառայություններ:

+374 11 201 410

info@amca.am

51 Arshakunyats Ave., area 47, Yerevan, Armenia

Աղբյուրներ:

Theophile Margellos, Sophia Bonne, Gordon Humphreys and Sven Sturmann, *Mediation: Creating Value in International IP Disputes*, (2018 Wolters Kluwer).

Alice Kelly, *Manual of Mediation and Arbitration in Intellectual Property: Model For Developing Countries,* (2023 Dialetica).

Christopher W. Moore, *The Mediation Process: Practical Strategies for Resolving Conflict* (4th ed Jossey-Bass).

James Smith, Mediating International Intellectual Property Disputes *Journal of the Indian Law Institute*, vol. 39, no. 2/4, 1997, pp. 238–59. Available at: http://www.jstor.org/stable/43953270.

Susan Felicity Corbett Mediation of Intellectual Property Disputes: A Critical Analysis, (2011) *New Zealand Business Law Quarterly,* Vol. 17, pp. 51-67. Available at: https://ssrn.com/abstract=1802207

Jeremy Lack, Addressing the IP Dispute Resolution Paradox: Combining Mediation with Arbitration and Litigation, *Global Arbitration Review*, 21 December 2022. Available at: https://globalarbitrationreview.com/guide/the-guide-ip-arbitration/second-edition/article/addressing-the-ip-dispute-resolution-paradox-combining-mediation-arbitration-and-litigation